# Ա ՈՒ Դ Ի Տ Ո Ր Ա Կ Ա Ն   Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## Թ Ի Վ  02

Ք.ԵՐԵՎԱՆ

19 փետրվարի 2007թ.

# ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Քյավառ Աուդիտ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն,
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գր. Նարեկացու 43, հեռ. 2 41 84; 2 35 75; (09) 215935
E-mail:anahit19@rambler.ru

- Աուդիտորական ծառայությունների իրականացման Լիցենզիա Սերիա-ԱԾ N 038, 14-ը ապրիլի 2005թ. N 382 – Ա հրաման ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
  Պետ. ռեգիստրի վկայական՝ 0474115, ՀՎՀՀ 08410295,
  Հաշվարկային հաշիվ՝ 247180017359 ԱՇԻԲ Կամո մասնաճյուղ

Կատարող ԱՆԱՀԻՏ ՇԱՀԶԱԴՅԱՆ

աուդիտորի /ընդհանուր աուդիտ, անժամկետ/ որակավորման վկայական թիվ 159 տրված 17.02.2000թ.

## *2. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*

***«ՏՈՆՏՈՆ» Ինվեստիցիոն ՍՊԸ***

ՀՀ ք. Երևան, 375010, Դեղատան 2

Իրավաբանական անձի պետական գրանցման վկայական թիվ 045072

Պետական գրանցման համարը 28211003586, ծածկագիր 37452622

Գործունեության իրականացման հասցեն

*ՀՀ ք. Երևան, 375010, Դեղատան 2*

ՀՎՀՀ 00841696

Գործունեության հիմնական տեսակը

- Ինվեստիցիա
- Արտարժույթի առուվաճառք

Աուդիտի ընթացքում կատարվեց «ՏՈՆՏՈՆ» Ինվեստիցիոն ՍՊԸ իրականացրած գործունեության, առ 31 դեկտեմբերի 2006թ. դրությամբ հաշվապահական հաշվեկշռի, 01.01.2006թ.–31.12.2006թ. ժամանակահատվածի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության, հավաստիության ստուգում, կիրառելով ցուցանիշների ստուգման թեսթային հիմունքները:

Աուդիտը իրականացվել է աուդիտի ստանդարտներին համապատասխան: Ընկերության հաշվապահական հաշվառումը բավարարում է «Հաշվապահական Հաշվառման» մասին ՀՀ օրենքի պահանջներին և վարվում է ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան, տարեկան ֆինանսական հաշվետվություններում կիրառված են նշված ստանդարտների պահանջները:

## 3. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ք. Երևան, «ՏՈՆՏՈՆ» Ինվեստիցիոն ՍՊԸ

Մենք աուդիտի ենք ենթարկել , «ՏՈՆՏՈՆ» Ինվեստիցիոն ՍՊԸ-ի հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31.12. 2006թ. ինչպես նաև 01.01.2006թ.–31.12.2006թ. հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է «ՏՈՆՏՈՆ» Ինվեստիցիոն ՍՊԸ-ի ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին /աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին/ համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները պարունակում են հավաստի ու արժանահավատ տեղեկատվություն, կազմակերպության ֆինանսական վիճակի՝ առ 31. 12. 2006թ., ինչպես նաև 01.01.2006թ.–31.12.2006թ. հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը:

Կցվում է տարեկան ֆինանսական հաշվետվությունների լուսապատճենը:

«ՏՈՆՏՈՆ» Ինվեստիցիոն ՍՊԸ-ն պատասխանատու է ներկայացրած փաստաթղթերի պատրաստման և հավաստիության համար:

«ՔՅԱՎԱՌ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն պատասխանատու է իր տված աուդիտորական եզրակացության, իրեն տրամադրված տեղեկությունների գաղտնիության ապահովման համար:

Տնօրեն

աուդիտոր

Ա. Շահզադյան

Կ.Տ.

19 փետրվարի 2007թ.

ք. Երևան, 375010, Դեղատան 2